



<i>Համարը</i> N 212-Լ	<i>Տեսակը</i> Հիմնական
<i>Տիպը</i> Լոկալ որոշում	<i>Կարգավիճակը</i> Գործում է
<i>Սկզբնաղբյուրը</i> Հրապարակվել է կայքում	<i>Ընդունման վայրը</i> Երևան
20.03.2019	
<i>Ընդունող մարմինը</i> ՀՀ կառավարություն	<i>Ընդունման ամսաթիվը</i> 07.03.2019
<i>Ստորագրող մարմինը</i> ՀՀ վարչապետ	<i>Ստորագրման ամսաթիվը</i> 18.03.2019
<i>Վավերացնող մարմինը</i>	<i>Վավերացման ամսաթիվը</i>
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 21.03.2019	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

Գալեր ալլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2019 թվականի N 212-Լ

ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Լ որոշման 44-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն. Փաշինյան

2019 թ. մարտի 18
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
մարտի 7-ի N 212-Լ որոշման

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
մարտի 7-ի N 212-Լ որոշման

ԾՐԱԳԻՐ

**ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	5
2. ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ԵՎ ԱՆՁՐԵՎԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	6
2.1. ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՈՒՄ	6
2.2. ԱՆՁՐԵՎԱՑՈՒՄ	8
3. ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ	9
4. ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ.....	10
5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	13
6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	15
7. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ	22
8. ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ	23
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության ոռոգելի գոտու գյուղատնտեսական շրջանառության մեջ ընդգրկված մշակաբույսերի կայուն ջրամատակարարման ապահովումը, տարածքների ընդլայնումն ու բերքատվության բարձրացումը գյուղատնտեսության կայուն զարգացման ուղղության գերակա ուղղություններից մեկն է:

2. Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում մշակվել են 35,1 հազ. հա բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում՝ 28,3 հազ. հա՝ բանջարանոցային, 6,8 հազ. հա՝ բոստանային, 25,4 հազ. հա՝ կարտոֆիլի, 76,3 հազ. հա՝ կերային, 155,3 հազ. հա՝ հացահատիկային և հատիկաընդեղենային: Բազմամյա տնկարկների տարածքը կազմել է 58,1 հազ. հա, այդ թվում՝ 42,3 հազ. հա՝ պտղատու, 15,8 հազ. հա՝ խաղողի այգիներ:

3. Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում, կապված կլիմայի գլոբալ փոփոխությունների և Արարատյան հարթավայրի ստորգետնյա ջրերի աննախադեպ սպառման հետ, ստեղծվել է ջրային ռեսուրսների խիստ դեֆիցիտ, որն զգալի բացասական ազդեցություն է թողնում գյուղատնտեսական մշակաբույսերի ջրապահովվածության վրա: Չնայած Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից քայլեր են ձեռնարկվում նոր ջրամբարների կառուցման, ոռոգման համակարգերի արդիականացման, ստորերկրյա ջրային պաշարների օգտագործման կրճատման ճանապարհով հիմնախնդրի լուծման ուղղությամբ, այնուամենայնիվ, դրանք զգալի ժամանակ և ֆինանսական միջոցներ են պահանջում, իսկ ջրային պաշարների դեֆիցիտի լրացումը Սևանա լճի ջրային պաշարների հաշվին հանգեցնում է էկոլոգիական խնդիրների:

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի 70 համայնքների շուրջ 28 հազ. հա հողատարածքներ ունեն գերնորմատիվային ջրապահանջարկ (գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներով

համայնքների ցանկն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2007 թվականի ապրիլի 2-ի N 18-Ա և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2007 թվականի ապրիլի 2-ի N 77-Ա համատեղ հրամանով հաստատված «Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները Հայաստանի Հանրապետության ոռոգելի հողատարածքների համար» ձեռնարկում): Ոռոգման նորմաները տարբեր տարածաշրջաններում տատանվում են 5200-9600 մ³/հա սահմաններում՝ 1.3-1.8 անգամ գերազանցելով նորմատիվային ջրապահանջարկը:

5. Ստեղծված իրավիճակում ջրային պաշարների պահպանման և արդյունավետ օգտագործման գործում պետության դերը տարեց տարի առավել կարևորվում է: Այն ընդգրկում է ոռոգման քաղաքականության մշակում, այդ թվում՝ ոռոգման արդիական համակարգերի ներդրման խթանում՝ հողօգտագործողներին համաֆինանսավորման միջոցով:

6. Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսությունում տրամադրվող վարկերի մատչելիության ծրագրերի գծով հանրապետությունում առկա է զգալի փորձ: Ընդհանուր առմամբ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարողներին 2011-2017 թվականներին տրամադրվել է շուրջ 127.8 հազ. միավոր վարկ՝ 106.6 մլրդ դրամ գումարով: Սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 5.8 մլրդ դրամ:

7. Հայաստանի Հանրապետության մարզպետարաններից ստացված տեղեկատվության համաձայն կաթիլային ոռոգման համակարգերով ոռոգվող հողատարածքները 2017 թվականի հուլիս ամսվա դրությամբ կազմել են շուրջ 1220 հա, 2018 թվականի հունվար ամսվա դրությամբ՝ շուրջ 1270 հա, 2018 թվականի օգոստոս ամսվա դրությամբ՝ շուրջ 1740 հա: 2018 թվականի ընթացքում կաթիլային համակարգ է տեղադրվել 146 հա հողատարածքում:

8. Այսպիսով, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ կաթիլային ոռոգման համակարգեր են տեղադրված շուրջ 1900 հա հողատարածքներում:

9. Նշվածից կարելի է եզրահանգել, որ հանրապետությունում նշված համակարգերի տարածումն ընթանում է բավական ցածր տեմպերով:

10. Գյուղատնտեսական հողատարածքների ոռոգման հիմնախնդրի լուծման համար նպատակահարմար է ջրախնայող համակարգերի կիրառման խրախուսումը՝ մակերեսային ոռոգման համեմատությամբ դրանց առավելություններին ծանոթացման միջոցով բարձրացնելով ջրօգտագործողների իրազեկվածության մակարդակը, արդյունքում՝ նպաստելով այդ համակարգերի աստիճանական ներդրմանը:

1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Ծրագրի իրականացման ռազմավարական նպատակներն են՝

1) ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը.

2) հողօգտագործողների եկամուտների աճի ապահովումը:

12. Ծրագրի իրականացման նպատակը գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումն է:

13. Ծրագրի իրականացման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ հիմնական խնդիրները՝

1) բարձրացնել մակերեսային ոռոգման նկատմամբ միկրոռոգման առավելությունների վերաբերյալ ջրօգտագործողների իրազեկվածության մակարդակը՝ շահագրգռելով վերջիններիս սեփական կամ վարկային միջոցներով իրենց հողակտորներում ներդնելու ոռոգման արդիական համակարգեր.

2) պետական աջակցություն ցուցաբերել կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգերի ներդրման գործընթացում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող՝ արդի տեխնոլոգիաներով ոռոգման համակարգերի ներդրման համար նպատակային վարկերի տոկոսադրույքի

մասնակի սուբսիդավորման միջոցով բարձրացնելով վարկավորման մատչելիության մակարդակը կամ մասնակի փոխհատուցելով կատարված ծախսերը:

2. ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ԵՎ ԱՆՁՐԵՎԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Կաթիլային ոռոգման և անձրևացման եղանակները հիմնականում լայնորեն կիրառվում են այն երկրներում, որտեղ առկա է ոռոգման ջրի դեֆիցիտ և բարձր ինքնարժեք, ինչպես նաև ռելիեֆի կտրտվածություն, ջրգող օջախների առկայություն և այլն, դրանց ներդրումը նպատակահարմար է ինչպես փոքր տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբով արտադրությունների համար:

15. Ջուրն ավելի արդյունավետ օգտագործելու հնարավորությունը ոռոգման արդիական համակարգերի ամենադրական բնութագրերից մեկն է՝ ջրի խնայողությունը մակերեսային ոռոգման համակարգի համեմատությամբ կաթիլային ոռոգման դեպքում կազմում է ավելի քան 50%, անձրևացման դեպքում՝ ավելի քան 30% (գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում այս ցուցանիշները շատ ավելի բարձր են): Բացի դրանից, ոռոգման արդիական համակարգերն ունեն հետևյալ առավելությունները՝

2.1. ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՈՒՄ

16. Ոռոգման կաթիլային եղանակը, որն արդյունավետ է հատկապես բանջարաբոստանային մշակաբույսերի ու բազմամյա տնկարկների ոռոգման համար, ունի հետևյալ առավելությունները.

1) կաթիլային ոռոգումը թույլ է տալիս ապահովել պարարտանյութերի մատուցումը ոռոգման ջրի հետ միասին բույսի աճի համար անհրաժեշտ տարրեր փոխելու, պարարտանյութերի ծախսը կրճատվում է 50%-ով.

2) ոռոգման տարածքի սահմանափակ խոնավեցումը չի խանգարում գյուղատնտեսական մեքենաների աշխատանքին, ոռոգումից հետո հողի չորացմանն սպասելու անհրաժեշտություն չի առաջանում, բոլոր գյուղատնտեսական աշխատանքները կարելի է կատարել օպտիմալ ժամանակում.

3) կաթիլային ոռոգումը բացառում է մակերևութային հոսքը, այսինքն, կանխում է հողի ջրային էրոզիան, հետևաբար, այսպիսի ոռոգման համակարգը կարելի է օգտագործել անգամ զառիթափ լանջերում, անհարթ հատվածներում, ոչ կանոնավոր հողատարածքներում և այլն.

4) քանի որ միջշարային տարածությունը մնում է չոր, հեշտանում է պայքարը մոլախոտերի դեմ, բացի դրանից հնարավորություն է ստեղծվում ոռոգման ցանցի միջոցով օգտագործելու հերբիցիդներ՝ առանց ավելորդ աշխատանքների.

5) կաթիլային ոռոգման ժամանակ վեգետացիոն զանգվածի և պտղի խոնավեցում տեղի չի ունենում, ինչն ունի էական նշանակություն հիվանդությունների կանխման և բարձրորակ բերքի ստացման գործում և այլն:

17. Ոռոգման կաթիլային եղանակի առավելությունների մասին են խոսում որոշ երկրների փորձի արդյունքները, որտեղ այն ներդրվել է՝

1) Հնդկաստանում բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը բարձրացել է 10-47%, միջինը՝ 27% ջրի խնայողությունը կազմել է 15-68%, միջինը՝ 38%: Բերքատվության բարձրացում է գրանցվել նաև 23%-ով խաղողի, 98%-ով նոնենու այգիներում, 50%-ով լոլիկի, 88%-ով ձմերուկի դաշտերում, իսկ ջրի խնայողությունը՝ 36-53%.

2) Հորդանանում, Մարոկկոյում, Եգիպտոսում և Թունիսում բերքատվությունն աճել է 10-30 %-ով, ջրի խնայողությունը կազմել է 20-55%.

3) այլ հետազոտություններով ստացվել է, որ եկամուտ-ծախս հարաբերակցությունը կաթիլային ոռոգման համակարգի կիրառման դեպքում կազմել է 4.75՝ նոնենու, 2.05՝ խաղողի

և 1.91՝ լուրիկի մոտ՝ մակերեսային եղանակով ոռոգման՝ համապատասխանաբար 2.8, 1.48

և 1.25 արդյունքների փոխարեն:

2.2. ԱՆՁՐԵՎԱՑՈՒՄ

18. Ոռոգման անձրևացման եղանակը, որն արդյունավետ է հատկապես կարտոֆիլի, կերային և հացահատիկային, ինչպես նաև մի շարք բանջարաբուստանային մշակաբույսերի ոռոգման համար, ունի հետևյալ առավելությունները՝

- 1) ջրման գործընթացը մեքենայացված է և հնարավոր է ավտոմատացնել այն.
- 2) ջրման նորմերի կրճատման հետ միասին կրճատվում են նաև ջրի մատակարարման համար անհրաժեշտ էներգածախսերը.
- 3) չկա ժամանակավոր ջրանցքների կառուցման անհրաժեշտություն, բացակայում են ջրի տեղափոխման կորուստները.
- 4) հնարավոր է կարգավորել խոնավեցվող շերտի խորությունը, ինչը շատ կարևոր է ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի և հողերի փոքր հզորության պայմաններում.
- 5) հնարավոր է կիրառել տնկման (ցանքի) բարձր խտությամբ մշակաբույսերի համար.
- 6) խոնավանում է ոչ միայն հողը, այլև գետնամերձ օդի շերտը՝ բույսի համար ստեղծելով բարենպաստ միկրոկլիմայական պայմաններ.
- 7) անձրևացման միջոցով հնարավոր է իրականացնել տերևային պարարտացում, որը հանգեցնում է պարարտանյութերի առավել արդյունավետ օգտագործմանը.
- 8) կարելի է կիրառել վաղ գարնանային և ուշ աշնանային ցրտահարությունների դեմ պայքարի նպատակով.
- 9) հողի հավասարաչափ խոնավեցման շնորհիվ բարձրանում է մշակաբույսերի բերքատվությունը, լավանում է բերքի որակը:

19. Ոռոգման անձրևացման եղանակի առավելությունների մասին են խոսում որոշ երկրների փորձի արդյունքները.

Երկիրը	Ոռոգելի հողատարածքը, մլն հա	Ոռոգում է անձրևացմամբ	
		մլն հա	%
ԱՄՆ	24,7	13,3	53,8
Հնդկաստան	60,9	3,04	5,0
Չինաստան	59,3	2,9	4,9
Իսպանիա	3,61	0,85	23,5
Ռուսաստան	4,5	2,5	55,6
Կանադա	1,05	0,68	64,8
Մեքսիկա	6,2	0,4	6,4
Եգիպտոս	3,42	0,45	13,2

20. Մի շարք երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Կանադան, Ռուսաստանը, որոնք գտնվում են խոնավ գոտում և ունեն համեմատաբար մեղմ կլիմա, անձրևացման եղանակով ոռոգվում է ոռոգելի հողերի 53,8-66,6%-ը: Չորային գոտում գտնվող այնպիսի երկրներում, ինչպիսիք են Չինաստանը, Իսպանիան, Եգիպտոսը, որտեղ առկա է բարձր ջերմաստիճան, անձրևացման եղանակով ոռոգվում է հողերի 4,9-23,5%-ը:

21. Ամփոփելով համաշխարհային փորձը՝ կարելի է փաստել, որ անձրևացման եղանակով ոռոգման դեպքում հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը մակերեսային ոռոգման համեմատությամբ բարձրանում է 12-15%, իսկ ջրի խնայողությունը կազմում է 40-45%, բանջարանոցային մշակաբույսերի դեպքում բերքատվության աճը կազմում է 20-30%, ջրի խնայողությունը՝ 25-30%:

22. Հայաստանի Հանրապետությունում ոռոգման անձրևացման եղանակի ներդրման արդյունքում հնարավոր է ավանդական մակերեսային եղանակի համեմատությամբ տնտեսել շուրջ 30% ջուր, կանխատեսվում է բերքի ավելացում՝ շուրջ 20-30 %-ով:

3. ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

23. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

24. Ծրագիրը նախատեսվում է ներդնել գյուղատնտեսական մշակաբույսերով զբաղեցված տարածքներում՝ բացառությամբ ջերմատների և ջերմոցային տնտեսությունների:

4. ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

25. Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին աջակցություն ցուցաբերել ոռոգման արդիական համակարգերի ներդրման գործընթացին՝ կիրառելով (ըստ համակարգը ներդնող տնտեսավարողի հայեցողության) նշված տարբերակներից որևէ մեկը՝

1) սուբսիդավորել ոռոգման արդիական համակարգերի ներդրմանը (սխեմայի կազմում, կապիտալ ծախսեր, ներդրման աշխատանքներ) ուղղված վարկերի տոկոսադրույքներն այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տրամադրվեն 2 %, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքներում (այսուհետ՝ սահմանամերձ համայնքներ) կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալող կոոպերատիվներին (այսուհետ՝ կոոպերատիվ)՝ 0% տոկոսադրույքով, եթե ներդրման աշխատանքներն իրականացվելու են սույն ծրագրի 30-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությունում նշված մասնագիտացված կազմակերպության կողմից.

2) սուբսիդավորել ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար կատարված կապիտալ ծախսերի (մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց, բաշխիչ ցանց) համար տրամադրված վարկերի տոկոսադրույքներն այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տրամադրվեն 2%, իսկ սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում կամ

առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոռպորատիվներին՝ 0% տոկոսադրույքով, եթե ներդրման աշխատանքներն իրականացվելու են առանց սույն կետի 1-ին ենթակետում նշված մասնագիտացված կազմակերպության.

3) փոխհատուցել ոռոգման արդիական համակարգեր ներդնող տնտեսավարողների կողմից կատարված ծախսերի (սխեմայի կազմում, կապիտալ ծախսեր, ներդրման աշխատանքներ) 16 %-ը, իսկ սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոռպորատիվներին՝ 18 %-ը, եթե ներդրման աշխատանքներն իրականացվելու են սույն կետի 1-ին ենթակետում նշված մասնագիտացված կազմակերպության կողմից.

4) փոխհատուցել ոռոգման արդիական համակարգեր ներդնող տնտեսավարողների կողմից կատարված կապիտալ ծախսերի (մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց, բաշխիչ ցանց) 16%-ը, իսկ սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոռպորատիվներին՝ 18 %-ը, եթե ներդրման աշխատանքներն իրականացվելու են առանց սույն կետի 1-ին ենթակետում նշված մասնագիտացված կազմակերպության:

26. Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար պահանջվող համաֆինանսավորման հաշվարկներն արվել են ծրագրի բյուջեն ձևավորելու համար (մանրամասն հաշվարկը ներկայացվում է NN 1, 2, 3, 4, 5 և 6 աղյուսակներում), սակայն կանխատեսվող գումարները փոփոխական են՝ կախված համակարգերի փաստացի (նախահաշվային) արժեքից (կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումների կողմնորոշիչ՝ մոտավոր հաշվարկները ներկայացվում են NN 7, 8 և 9 աղյուսակներում), սուբսիդիաների տրամադրման ժամանակից և

պայմաններից, փոխհատուցված գումարներից: Հաշվարկների համար հիմք ընդունված հողատարածքներն ըստ համակարգերի (կաթիլային և անձրևացում) և համաֆինանսավորման տարբերակի (սուբսիդավորում և փոխհատուցում) նույնպես պայմանական են:

27. Տրամադրվելիք սուբսիդավորման և փոխհատուցման գծով կանխատեսվող ծախսերի ֆինանսական գնահատման համար հիմք են ընդունվել հետևյալ գործոնները՝

1) 2018 թվականին կաթիլային ոռոգման համակարգերի տեղադրման համար ութ տնտեսավարողների տրամադրվել են 315,526.417 հազ. դրամ ընդհանուր գումարով 12% տոկոսադրույքով վարկեր, որոնց տոկոսադրույքների 10 տոկոսային կետի սուբսիդավորման համար 2019-2021 թվականներին կպահանջվի 48,568.627 հազ. դրամ, այդ թվում՝ 2019 թվականին՝ 27,127.23 հազ. դրամ, 2020 թվականին՝ 16,991.498 հազ. դրամ, 2021 թվականին՝ 4,449.899 հազ. դրամ.

2) 2019-2023 թվականներին տարեկան կաթիլային ոռոգման համակարգեր տեղադրվելու են 1600 հա հողատարածքներում, անձրևացման համակարգեր՝ 200 հա՝

	2019 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.	Ընդամենը 2019-2023 թ.
Կաթիլային, հա	1600	1600	1600	1600	1600	8000
Սուբսիդավորմամբ	1300	1300	1300	1300	1300	6500
Փոխհատուցմամբ	300	300	300	300	300	1500
Անձրևացում, հա	200	200	200	200	200	1000
Սուբսիդավորմամբ	120	120	120	120	120	600
Փոխհատուցմամբ	80	80	80	80	80	400
Ընդամենը, հա	1800	1800	1800	1800	1800	9000

3) 1 հա հողատարածքում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման առավելագույն արժեքը 2.2 մլն դրամ է, անձրևացմանը՝ 2.7 մլն դրամ.

4) վարկերը տրամադրվելու են 3 տարի մարման ժամկետով, 12% տոկոսադրույքով, սուբսիդավորվելու է տոկոսադրույքների 10 տոկոսային կետը՝ 1200 հա-ի համար, 12 տոկոսային կետը՝ 220 հա-ի (հողատարածքների 15-17%-ը՝ NN 3 և 5 աղյուսակներ) համար.

5) վարկառու և փոխհատուցում ստացող շահառուների համար հավասար պայմաններ ապահովելու նպատակով փոխհատուցվելու է համակարգի ներդրման արժեքի 16%-ը, սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին (հողատարածքների 20%-ը՝ N 6 աղյուսակ)՝ 18%-ը (3 տարի մարման ժամկետով, 12% տոկոսադրույքով տրամադրվող վարկերի 10 և 12 տոկոսային կետի տոկոսադրույքների սուբսիդավորման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող միջոցները մոտավորապես կազմում են վարկերի գումարների համապատասխանաբար 16 և 18%-ը):

28. Ծրագրի իրականացման համար 2019 թվականին կպահանջվի 312,049.591 հազ. դրամ, 2020 թվականին՝ 552,683.304 հազ. դրամ, 2021 թվականին՝ 681,484.482 հազ. դրամ, 2022 թվականին՝ 714,650.0 հազ. դրամ, 2023 թվականին՝ 1360,051.25 հազ. դրամ (5-րդ տարում սուբսիդավորման և փոխհատուցման համար անհրաժեշտ գումարը կազմում է 714,650.0 հազ. դրամ, իսկ մնացած 646,301.25 հազ. դրամը 5-րդ տարում վերցված վարկերի հաջորդող երեք տարիների սուբսիդավորման գումարն է, այդ թվում՝ 6-րդ տարվա սուբսիդավորման գումարը կազմում է 429,727.639 հազ. դրամ, 7-րդ տարվանը՝ 178,958.194 հազ. դրամ, 8-րդ տարվանը՝ 37,615.417 հազ. դրամ):

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

29. Ծրագրի իրականացումից ակնկալվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական արդյունքներ: Մասնավորապես, ծրագրով նախատեսված թիրախային քանակությունն ապահովվելու դեպքում առաջիկա 5 տարում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

1) քանակական

ա. արդիական համակարգերով ոռոգվող հողատարածքների աճ 9000 հա-ով,

բ. ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում և էական խնայողություն (շուրջ 80 մլն մ³, այդ թվում՝ 2019 թ.՝ 5.4 մլն մ³, 2020 թ.՝ 10.8 մլն մ³, 2021 թ.՝ 16.2 մլն մ³, 2022 թ.՝ 21.6 մլն մ³, 2023 թ.՝ 27 մլն մ³),

գ. բերքատվության աճ՝ շուրջ 10.0 մլրդ դրամ հավելյալ եկամուտ (2019 թ.՝ 0.7 մլրդ դրամ, 2020 թ.՝ 1.4 մլրդ դրամ, 2021 թ.՝ 2.0 մլրդ դրամ, 2022 թ.՝ 2.6 մլրդ դրամ, 2023 թ.՝ 3.3 մլրդ դրամ),

դ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի ավելացում տարեկան ներդրվող գումարի (առնվազն 2.5 մլրդ դրամ) շուրջ 17%-ի չափով՝ ավելացված արժեքի (սախատեսվող գումարի շուրջ 60%-ը ներդրվող սարքավորումներն են) և շրջանառության (առնվազն՝ 5%) հարկերի տեսքով, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման շնորհիվ՝ եկամտահարկի տեսքով (տարեկան՝ ավելի քան 400.0 մլն դրամ),

ե. ոռոգման արդիական համակարգերի շահագործման դեպքում տնտեսվում են ինչպես նյութական միջոցներ, այնպես էլ մարդկային ռեսուրս: Տնտեսված ժամանակից և ֆինանսական միջոցներից հնարավորություն է առաջանում մշակել հավելյալ տարածք: Տնտեսական արդյունավետությունը, ներդրումների հետզնման ժամանակահատվածը և մշակության կազմակերպման հավելյալ հնարավորությունը (խաղողի վազի, լոլիկի և խնձորենու օրինակներով) ներկայացվում է NN 10, 10.1 և 10.2 աղյուսակներում.

2) որակական

ա. բերքի որակի բարելավում,

բ. հանրապետության ջրային, էներգետիկ և հողային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում,

գ. շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մեղմացում,

դ. մշակովի հողատարածքների ընդլայնում պոտենցիալ ոռոգելի, սակայն փաստացի չմշակվող տարածքների մշակման խթանում,

ե. միկրոռոտզման տեխնոլոգիաների տարածում գյուղացիական տնտեսություններում,
 գ. ռոտզման համակարգի արդիականացման խթանում, ռոտզման շրջանում լար-
 վածության նվազում, հաշվառման և կառավարման արդյունավետության բարձրացում,
 է. ջրօգտագործողի (ֆերմերի) ֆինանսատնտեսական և սոցիալական վիճակի
 բարելավում, վճարունակության բարձրացում:

6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

30. Ծրագիրը կիրագործվի հետևյալ հիմնական մոտեցումների կիրառմամբ՝

- սուբսիդավորվող վարկերի տրամադրում՝ կապալառուի հետ կնքվող պայմանագրերի հիման վրա,
- սուբսիդավորվող վարկերի տրամադրում՝ անմիջապես շահառուին,
- փոխհատուցման կարգով:

1) ծրագրի շահառուներն են կաթիլային ռոտզման և (կամ) անձրևացման համակարգերի ներդրման համար սույն ծրագրի պայմաններին համապատասխան պայմանագիր կնքած գյուղատնտեսությունում տնտեսավարողները (ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը), որոնք բավարարում են ծրագրին մասնակից բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական (վարկունակության) պահանջները կամ սեփական և այլ միջոցներով ռոտզման արդիական համակարգեր ներդնող գյուղատնտեսությունում տնտեսավարողները (այսուհետ՝ շահառու)։

2) ծրագրի մասնակիցներն են՝

ա. ցանկացած բանկ կամ վարկային կազմակերպություն (այսուհետ՝ ֆինանսական կառույց), որը սույն ծրագրի պայմաններին համապատասխան վարկ է տրամադրում տնտեսավարողներին և բավարարում է ծրագրի պահանջները,

բ. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ),

գ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն),

դ. ծրագրի շրջանակներում ոռոգման արդիական համակարգեր ներդնող այն մասնագիտացված կառույցները, որոնք, բավարարելով նշված պայմանները և չափանիշները, ներկայացնելով համապատասխան հայտ՝ համաձայն ձևաչափ 1-ի, կընդգրկվեն նախարարության կողմից հրապարակված ցանկում (այսուհետ՝ կապալառու)՝

- մեկ միավոր հողատարածքում կաթիլային ոռոգման համակարգի ներդրումը՝ սխեմայի կազմումն ու տեղադրումն իրականացվում է մեկ կազմակերպության կողմից,

- կաթիլային ոռոգման համակարգի սխեմայի բացատրական մասում պարտադիր ներառվում են բույսի՝ ջրի պահանջարկի հիմնավորումը, ոռոգման և պարարտացման կառավարման ծրագրերը, ինչպես նաև լիարժեք տեղեկություններ սարքավորումների ծագման, այդ թվում՝ օգտագործված նյութերի մասին,

- համակարգի տեղադրումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում համակարգի շահագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրումն ու երաշխիքային սպասարկումն իրականացնում է համակարգը ներդնող կազմակերպությունը՝ կապալառուն,

- կապալառուն պետք է ունենա նախորդ տարիներին նմանատիպ աշխատանքների կատարման փորձ.

3) վարկավորման և վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը.

ա. վարկերը տրամադրվելու են դրամով, առավելագույնը 12% անվանական տոկոսադրույքով, ընդ որում, վարկի հետ կապված ֆինանսական կառույցների ծառայությունների

համար այլ վճարներ (կանխիկացման վճար, սպասարկման վճար, միջնորդավճարներ և այլն) չեն գանձվում,

բ. ծրագրի շրջանակներում կապալառուի միջոցով աշխատանքների իրականացման դեպքում 1 հա-ի համար կատարվող առավելագույն վարկային ներդրումն անկախ մշակաբույսից կազմում է 2.2 մլն դրամ՝ կաթիլային ոռոգման համակարգի համար և 2.7 մլն դրամ՝ անձրևացման համակարգի համար, տրամադրվող վարկերի հանրագումարի մնացորդը մեկ շահառուի համար չի կարող գերազանցել 150.0 մլն դրամը,

գ. ծրագրի շրջանակներում առանց կապալառուի աշխատանքների իրականացման դեպքում 1 հա-ի համար կատարվող առավելագույն վարկային ներդրումն անկախ մշակաբույսից կազմում է 1.6 մլն դրամ՝ կաթիլային ոռոգման համակարգի համար և 1.9 մլն դրամ՝ անձրևացման համակարգի համար, տրամադրվող վարկերի հանրագումարի մնացորդը մեկ շահառուի համար չի կարող գերազանցել 110.0 մլն դրամը,

դ. վարկավորման գործընթացը նախաձեռնում են շահառուները՝ մինչև համակարգերի ներդրմանն ուղղված հիմնական միջոցների ձեռքբերումն ու ներդրման աշխատանքների սկսվելը դիմելով ֆինանսական կառույցին վարկավորում ստանալու համար,

ե. ֆինանսական կառույցի կողմից շահառուին տրամադրվող վարկով նախատեսված գումարը (ֆինանսական կառույցի վարկունակության պահանջները բավարարելու դեպքում) անկանխիկ եղանակով, փող առ փող կամ միանվագ փոխանցում է կապալառուի կամ շահառուի համապատասխան հաշվին,

զ. պահանջվող նվազագույն փաստաթղթերը՝

զա. կապալառուի միջոցով աշխատանքների իրականացման դեպքում՝

- տնտեսությունում կատարված նախնական մոնիթորինգի արձանագրություն,
- պայմանագրի առկայություն՝ շահառուի և կապալառուի միջև,
- կատարված փոխանցումները հավաստող փաստաթղթեր,

- ընդունման-հանձնման ակտ.

գր. առանց կապալառուի աշխատանքների իրականացման դեպքում՝

- տնտեսությունում կատարված նախնական մոնիթորինգի արձանագրություն,

- կատարված աշխատանքները (վճարումներ, գնումներ) հավաստող փաստաթղթեր,

- հավաստագրի առկայություն (ձեռք բերված ապրանքի որակի համապատասխանության վերաբերյալ),

- համակարգի տեղադրումից հետո կատարված մոնիթորինգի արձանագրություն,

է. վարկի մայր գումարի համար կարող է սահմանվել արտոնյալ ժամկետ՝ առավելագույնը տարեկան 6 ամիս,

ը. վարկի մարման ժամկետը մինչև 3 տարի է, վարկի մարման գործընթացն իրականացվում է ֆինանսական կառույցի և շահառուի միջև կնքվող պայմանագրով սահմանվող վարկի մարման ժամանակացույցով, իսկ վարկի տոկոսադրույքը հաշվարկվում է մայր գումարի մնացորդի նկատմամբ,

թ. շահառուի կողմից վարկի մայր գումարի ժամկետից շուտ կատարված մարումների համար ֆինանսական կառույցների կողմից տույժ և տուգանք չի հաշվարկվում ու չի գանձվում,

ժ. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը նախաձեռնում են ֆինանսական կառույցները, որոնք իրականացնում են սույն ծրագրի պայմաններին համապատասխան գործարքներ,

ժա. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է սույն ծրագրի 25-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված սուբսիդավորման սահմանաչափերով,

ժբ. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է վարկի մայր գումարի և վարկի տոկոսադրույքի չսուբսիդավորվող մասի փաստացի մարումների հիման վրա,

ժգ. տույժերը և (կամ) տուգանքները սուբսիդավորման ենթակա չեն,

ժդ. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը ԳՖԿ-ի կողմից փոխանցվում է ֆինանսական կառույցի համապատասխան հաշվին՝ տվյալ ֆինանսական կառույցի հայտերի հիման վրա: Հայտի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ԳՖԿ-ի և տվյալ ֆինանսական կառույցի միջև կնքվող պայմանագրով: Պայմանագրի օրինակելի ձևը մշակվում է ԳՖԿ-ն՝ համաձայնեցնելով նախարարության հետ,

ժե. ֆինանսական կառույցը վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտը ԳՖԿ է ներկայացնում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ ոչ ուշ, քան հաջորդ ամսվա հինգերորդ աշխատանքային օրը: ԳՖԿ-ն հայտն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում բավարարում է հայտը և վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը փոխանցում համապատասխան ֆինանսական կառույցի հաշվի համարին, եթե հայտը բավարարում է ծրագրի պահանջները.

4) կատարված ծախսերի փոխհատուցման գործընթացը՝

ա. փոխհատուցման գործընթացն իրականացվում է գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից ոռոգման արդիական համակարգերի ներդրմանն ուղղված հիմնական միջոցների և ներդրման աշխատանքների ծախսերի մասնակի փոխհատուցմամբ,

բ. ծրագրի շրջանակներում կապալառուի միջոցով աշխատանքների իրականացման դեպքում 1 հա-ի համար կատարվող առավելագույն ներդրումը (սխեմայի կազմում, կապիտալ ծախսեր, ներդրման աշխատանքներ) անկախ մշակաբույսից կազմում է 2.2 մլն դրամ կաթիլային ոռոգման համակարգի համար և 2.7 մլն դրամ անձրևացման համակարգի համար, փոխհատուցվող գումարը մեկ շահառուի համար (բացառությամբ կոոպերատիվների) չի կարող գերազանցել 10.0 մլն դրամը, կոոպերատիվների կողմից համակարգի ներդրման դեպքում 27.0 մլն դրամը,

գ. ծրագրի շրջանակներում առանց կապալառուի աշխատանքների իրականացման դեպքում 1 հա-ի համար կատարվող առավելագույն ներդրումը (կապիտալ ծախսեր՝ մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց, բաշխիչ ցանց) անկախ մշակաբույսից կազմում է 1.6 մլն դրամ՝ կաթիլային ոռոգման համակարգի համար և 1.9 մլն դրամ անձրևացման համակարգի համար, փոխհատուցվող գումարը մեկ շահառուի համար (բացառությամբ կոոպերատիվների) չի կարող գերազանցել 8.0 մլն դրամը, կոոպերատիվների կողմից համակարգի ներդրման դեպքում 20.0 մլն դրամը,

դ. փոխհատուցման գործընթացը նախաձեռնում են գյուղատնտեսությունում տնտեսավարողները՝ մինչև համակարգերի ներդրմանն ուղղված հիմնական միջոցների ձեռքբերումն ու ներդրման աշխատանքների սկսվելն էլեկտրոնային և (կամ) թղթային տարբերակով դիմելով նախարարություն՝ համաձայն ձևաչափի 2-ի՝ որպես շահառու ծրագրին մասնակցելու համար համաձայնություն ստանալու նպատակով,

ե. կատարված ներդրումները ենթակա են փոխհատուցման սույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններով առաջադրված սահմանաչափերով, եթե՝

եա. ոռոգման արդիական համակարգը ձեռք է բերվել սույն կետի 4-րդ ենթակետի «դ» պարբերությամբ սահմանված համաձայնությունն ստանալուց հետո,

եր. շահառուի կողմից կներկայացվեն ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերումը հավաստող փաստաթղթեր,

զ. փոխհատուցման ընթացակարգ,

զա. փոխհատուցումն իրականացվում է սույն ծրագրի 25-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված փոխհատուցման սահմանաչափերով,

զբ. փոխհատուցման ենթակա գումարը ԳՖԿ-ի կողմից փոխանցվում է շահառուի համապատասխան հաշվին՝ տվյալ շահառուի դիմումի հիման վրա: Դիմումի օրինակելի ձևը սահմանվում է նախարարության կողմից,

զգ. ոռոգման արդիական համակարգերի ներդրման աշխատանքների ավարտից հետո 10 տասն աշխատանքային օրվա ընթացքում շահառուի կողմից էլեկտրոնային և (կամ) թղթային տարբերակով դիմումը ներկայացվում է ԳՖԿ-ին: ԳՖԿ-ն դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է շահառուի համապատասխան հաշվին, եթե դիմումը համապատասխանում է ծրագրի պահանջներին,

զդ. փոխհատուցման ենթակա գումարը փոխանցվում է շահառուի տնտեսությունում կատարված աշխատանքների ուսումնասիրության նպատակով նախարարության կողմից տասն աշխատանքային օրվա ընթացքում իրականացված մոնիթորինգից հետո.

5) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝

ա. շահառուի կողմից վարկը ոչ նպատակային օգտագործվելու,

բ. եթե առկա են տվյալ վարկի մասով շահառուի մեկ տարվա (նախորդ 12 ամիսներ) կտրվածքով հանրագումարային վաթսուն օրվանից ավելի ժամկետանց պարտավորություններ կամ ֆինանսական կառույցի հանդեպ ունեցած ժամկետանց պարտավորությունների հետևանքով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի N 63 որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի՝ օբյեկտիվ չափանիշների վարկն ստանդարտ դասով դասակարգված չէ,

գ. շահառուի և ֆինանսական կառույցի միջև կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու,

դ. շահառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների հայտնաբերման:

Շահառուի կողմից վարկը ոչ նպատակային օգտագործվելու և կեղծ տեղեկատվություն տրամադրվելու դեպքերում մինչ այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման (սուբսիդավորված գումարի վերադարձը ԳՖԿ-ին իրականացնում է ֆինանսական կառույցը): Նշված մնացած դեպքերում վարկի սուբսիդավորումը դադարեցվում է տվյալ վարկի մարման ժամանակացույցով սահմանված վարկի նախորդ մարման օրվանից սկսած:

7. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

31. Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է նախարարությունը:

32. Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտերի ամփոփման արդյունքում ԳՖԿ-ն ձևավորում է վիճակագրական տվյալների բազա, որը ներառում է տոկոսադրույքի սուբսիդավորվող վարկի մասին՝ ծրագրի իրականացման հետ կապված տեղեկատվությունը, արձանագրված խնդիրները և իրագործման դժվարությունները:

33. Ֆինանսական կառույցի կողմից վարկի մոնիթորինգն իրականացվում է համաձայն վերջինիս ներքին իրավական ակտերի (ընթացակարգերի), ընդ որում, առաջին մոնիթորինգն իրականացվում է վարկը տրամադրելուց հետո երկու ամսվա ընթացքում:

34. Ֆինանսական կառույցը ԳՖԿ-ի և ֆինանսական կառույցի միջև կնքվող պայմանագրով սահմանված ձևով հաշվետվություն է ներկայացնում ԳՖԿ-ին:

35. Շահառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման կամ ներկայացված կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում ֆինանսական կառույցը շահառուի գործող վարկը հանում է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից և իրավունք ունի միակողմանիորեն փոփոխելու վարկի տոկոսադրույքը՝ կիրառելով տվյալ ֆինանսական կառույցում գործող գյուղատնտեսական կամ բիզնես վարկերի համար սահմանված ավելի բարձր տոկոսադրույք:

36. ԳՖԿ-ն առնվազն յուրաքանչյուր 30 օրը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում նախարարություն:

37. Հաշվետվությունը պարունակում է մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝

1) վարկերի և փոխհատուցման մասին տեղեկատվություն՝ ըստ մարզերի և համայնքների՝ վարկերի քանակը, գումարը, վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման կամ ծախսերի փոխհատուցման գումարը.

2) տեղեկատվություն մոնիթորինգի արդյունքների մասին.

3) տեղեկատվություն հայտնաբերված խախտումների մասին.

4) առաջարկություններ ծրագրի պայմանների բարելավման կամ կատարելագործման վերաբերյալ և այլն:

8. ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ

38. Ծրագրի հնարավոր ռիսկեր են համարվում՝

1) նախատեսված վարկային ռեսուրսների ոչ ամբողջական տեղաբաշխման հետևանքով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նախատեսված գումարներին համարժեք հայտերի բացակայությունը.

2) բնական աղետների, համաճարակների կամ հիմնական միջոցների փչացման հետևանքով տրամադրված վարկային ռեսուրսների մայր գումարի վերադարձման և տոկոսադրույքի վճարման անհնարինությունը.

3) անբարենպաստ եղանակային պայմանները.

4) անբարեխիղճ տնօրինումը.

5) ներդնող կազմակերպության լուծարումը, որը երաշխիքային սպասարկման ընթացքում կարող է առաջացնել հավելյալ ծախսեր.

6) բերքի շուկայական գնի հնարավոր անկումը:

Հ Ա Յ Տ

ԿԱԹՈՒԼԱՅԻՆ ՈՌԹՈԳՄԱՆ/ԱՆՁՐԵՎԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

..... ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն)
պատրաստականություն է հայտնում մասնակցելու ՀՀ կառավարության 2019 թվականի
..... --ի N __-Լ որոշմամբ հաստատված ոռոգման արդիական
համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի շրջանակներում
իրականացվելիք՝ կաթիլային ոռոգման/անձրևացման համակարգերի ներդրման
աշխատանքներին:

Միաժամանակ հայտարարում եմ, որ՝

- մեկ միավոր հողատարածքում կաթիլային ոռոգման/անձրևացման
համակարգի ներդրումը՝ սխեմայի կազմումն ու տեղադրումը կիրականացվեն
ընկերության կողմից,

- կաթիլային ոռոգման/անձրևացման համակարգի սխեմայի բացատրական
մասում կներառվեն բոլորի՝ ջրի պահանջարկի հիմնավորումը, ոռոգման և
պարարտացման կառավարման ծրագրերը, ինչպես նաև լիարժեք տեղեկություններ
սարքավորումների ծագման, այդ թվում՝ օգտագործված նյութերի մասին,

- համակարգի տեղադրումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում
համակարգի շահագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրա-
մադրումն ու երաշխիքային սպասարկումը կիրականացվեն ընկերության կողմից,

- ընկերությունն ունի նախորդ տարիներին նմանատիպ աշխատանքների
կատարման ----- տարվա փորձ:

Ներկայացնում եմ լրացուցիչ փաստաթղթեր ընկերության գործունեության և
կատարած աշխատանքների մասին *(ոչ պարտադիր դրույթ)*:

Հավաստիացնում եմ, որ սույն հայտով ներկայացված տեղեկատվությունն
արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ կեղծ փաստաթուղթ կամ
տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված
պատասխանատվության:

Պարտավորվում եմ ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում
դրա մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

Ստորագրող

.....
(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....
(ստորագրությունը)

..... 201_թ.

Կ. Տ.

Ձևաչափ 2

ՀՀ մարզի համայնքի բնակիչ
.....-ից*

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ԴԻՄՈՒՄ

ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Տեղեկացնում եմ, որ ՀՀ մարզի համայնքի տարածքում
.....-ի սեփականությունը հանդիսացող հա հողատարածքում
(սեփականության վկայական՝ N, կադաստրային ծածկագիր՝ N
.....) ցանկանում եմ ներդնել կաթիլային/անձրևացման ոռոգման համակարգ՝
..... մշակաբույսերի ոռոգման նպատակով: Համակարգի ներդրման
աշխատանքները նախատեսում եմ իրականացնել սեփական ուժերով/կապալառուի՝ ՀՀ
գյուղատնտեսության նախարարության կողմից հրապարակված ցանկում ընդգրկված
.....-ի միջոցով՝ - ընկած ժամանակահատվածում:

Խնդրում եմ ինձ (իրավաբանական անձ հանդիսացող դիմումատուի դեպքում՝
կազմակերպության անվանումը) ընդգրկել ոռոգման արդիական համակարգերի
ներդրման համաֆինանսավորման ծրագրում՝ որպես շահառու:

Ստորագրող

.....
(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....
(ստորագրությունը)

..... 20__թ.

Կ.Տ.

* - իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող դիմումատուի
դեպքում լրացվում են համապատասխան տվյալները:

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորում

	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026	Ընդամենը
Կաթիլային									
Սուբսիդիա (2018 թ.)	27127230	16991498	4449899	0	0	0	0	0	48568627
Սուբսիդիա	129998611	355193056	482120833	515900000	515900000	385901389	160706944.4	33779167	2579500000
Փոխհատուցում	105600000	105600000	105600000	105600000	105600000	0	0	0	528000000
Ընդամենը	262725841	477784554	592170732	621500000	621500000	385901389	160706944.4	33779167	3156068627
Անձրևացում									
Սուբսիդիա	14763750	40338750	54753750	58590000	58590000	43826250	18251250	3836250	292950000
Փոխհատուցում	34560000	34560000	34560000	34560000	34560000	0	0	0	172800000
Ընդամենը	49323750	74898750	89313750	93150000	93150000	43826250	18251250	3836250	465750000
Ամբողջը	312049591	552683304	681484482	714650000	714650000	429727639	178958194.4	37615417	3621818627

10 տոկոսային կետի սուբսիդավորման հաշվարկը (կաթիլային ոռոգում՝ տարեկան 1100 հա)*

